Մահախոսական • Некролог • Obituary

Биолог. журн. Армении, 3-4 (59), 2007

ՆԵՐՍԻՍՅԱՆ ՍԼԱՎԱ ԵՐՎԱՆԴԻ

(1946-2007թթ.)

Անասնաբուժական գիտությունը ծանր կորուստ կրեց: Մեզանից անժամանակ հեռացավ Անասնաբուծության և անասնաբուժության գիտական կենտրոնի տնօրեն, անասնաբուժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սլավա Երվանդի Ներսիսյանը:

Սլավա Երվանդի Ներսիսյանը ծնվել է 1946 թ. ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքում: 1966թ. ընդունվել և 1971թ. ավարտել է Լենինգրադի անասնաբուժական ինստիտուտը: Այնուհետև ծառայել է Խորհրդային բանակում:

1973թ. աշխատանքի է ընդունվել դաբաղի Համամիութենական ինստիտուտի Անդրկովկասյան մասնաճյուղում: 1975թ. ընտրվել I կրտսեր, իսկ 1981 թ. ավագ գիտական աշխատողի պաշտոնում: 1980թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը, ստացել անասնաբուժական գիտությունների թեկնածուի, իսկ 1998 թ. Ռուսաստանի Դաշնությունում պաշտպանել է դոկտորական ատենախոսությունը և ստացել անասնաբուժական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Սլավա Ներսիսյանը 1990թ. նշանակվել է դաբաղի Համամիութենական ինստիտուտի Անդրկովկասյան մասնաճյուղի վիրուսաբանության բաժնի վարիչ: 1992թ. վերափոխված Հայկական անասնաբուժական գիտահետազոտական ինստիտուտի (1998թ. վերանվանվել է Անասնաբուծության և անասնաբուժության գիտական կենտրոն) վիրուսաբանության բաժնի վարիչն էր:

2007թ.-ին նշանակվել է Անասնաբուծության և անասնաբուժության գիտական կենտրոնի տնօրեն:

Նա ղեկավարում էր գիտական կենտրոնի կոլեկտիվի հարգանքը և համակրանքը, պահանջկոտ էր ինչպես իր, այնպես էլ աշխատողների նկատմամբ:

Գիտության բնագավառում աշխատած տարիներին Ս. Ներսիսյանը իրեն դրսևորել է որպես լավագույն գիտական աշխատող, օժտված բարձր դիտելիքներով և կազմակերպչական մեծ ունակություններով, ընդունակ ինքնուրույն լուծելու առաջադրված բոլոր գիտական խնդիրները:

Աշխատանքային գործունեության ընթացքում աչքի է ընկել բացառիկ աշխատասիրությամբ, գիտական նորագույն ուղղություններին տիրապետելու ձգտումով: Բավականաչափ գործունյա էր, ձեռներեց և լավագույն կազմակերպիչ: Ավելի քան 170 գիտական աշխատանքների և 6 գյուտերի հեղինակ է, որոնք նվիրված են դաբաղի և այլ հատուկ վտանգավոր հիվանդությունների կանխարգելման, պայքարի և վերացման հիմնախնդիրներին, որոնց վերաբերյալ նա գիտական զեկուցումներով բազմիցս հանդես է եկել բազմաթիվ միջազգային և հանրապետական գիտաժողովներում:

Նրա ղեկավարությամբ թեկնածուական ատենախոսություն են պաշտպանել 5 ասպիրանտներ Լ. արդեն պատրաստվում էին պաշտպանելու ևս 2-ը:

Մեծ է նրա ներդրումը գյուղատնտեսական կենդանիների մի շարք վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերացման գործում: Նա սերտ կապի մեջ էր արտադրության հետ նպաստելով գիտա-գործնական անասնաբուժության զարգացմանը: Ս. Ներսիսյանը պարգևատրվել է բազմաթիվ պատվոգրերով, իսկ 1984 թ. արժանացել է «Պատվո նշան» շքանշանի:

2006 թ. ՀՀ ԲՈՀ-ի հանձնաժողովի կողմից նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: Ս. Ներսիսյանը Հայաստանի Ազգային պետական համալսարանի գիտական աստիճաններ շնորհող 022 մասնագիտական խորհրդի, ՀՀ Կրթության և գիտության նախարարության պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերի փորձագիտական հանձնաժողովի անդամ էր: Նա նաև Միջազգային համաճարակային հիվանդությունների բյուրոյի տարածաշրջանային տեղեկատվ. լաբորատորիայի փորձագետ Անդրկովկասի ներկայացուցիչն էր:

Վերջին ամիսներին հանրապետությունում կենդանիների վիրուսային հիվանդությունների համաճարակային իրավիճակի կապակցությամբ Ս. Ներսիսյանը ջանք ու եռանդ չէր խնայում համաճարակների ախտորոշման, կանխարգելման ու բուժման հասար մշտապես գտնվելով երկրի տարբեր մարզերում:

Մեծ է Ս. Ներսիսյանի ներդրումը ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի ինստիտուտների, մասնավորապես Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի հետ գիտական և կազմակերպչական կապերի ստեղծման գործում: Ս. Ներսիսյանի ղեկավարած լաբորատորիայի երկարամյա ջանքերի արդյունքում ուսումնասիրվել են ds-RNK պատրաստուկի բազմաշարքային համալիրի թունային, կանխիչ և ռեակտոգենային հատկությունները: Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտում ստեղծված այդ նոր հակավիրուսային պատրաստուկը, փորձարկվել է մի շարք անասնաբուժական տնտեսություններում և ստացել արտոնագիր այն դաբաղի դեմ օգտագործելու համար:

Ս. Ներսիսյանն ընդգրկվել էր Հանրապետությունում նորաստեղծ Կենսատեխնոլոգիաների ընկերության խորհրդի աշխատանքներում:

<< ԳԱԱ թղթակից անդամ պրոֆ. Ժ.Ի Հակոբյան